



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՅՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «ՄԵԴԻԱ»-Ն ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅՈՒՄ
ԱՌԱՐԿԱ Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ Մարինե Ավետիսյան
ՄԱՐԶ Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հրազդանի թիվ 12 հիմն. դպրոց

«ՄԵԴԻԱ»-Ն ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅՈՒՄ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ _____ 4

Մեդիագործիքների տեսակներ _____ 10

**Մեդիայի օգտագործման հաջորդականությունը
մեր աշխատանքում _____ 13**

**Առարկայի դասավանդման արդյունավետության
բարձրացում մեդիայի ինտեգրմամբ _____ 16**

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ _____ 22

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____ 23**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 24

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ- մասնագիտական ակնարկ.

Հանրակրթական դպրոցներում դասավանդվող «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրի նպատակն է՝ ապահովել սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների այն ծավալը, որը նախատեսված է տարրական և միջին դպրոցում՝ ըստ կրթական աստիճանների: Առարկայական ծրագրերում ներառված են միմյանց հետ փոխկապակցված բաժիններ, որոնք շարունակական են և ունեն հիմնականում գործնական բնույթ:

«Տեխնոլոգիա» առարկայի ծրագրային բաժինների ուսուցման համար նախատեսված ժամաքանակի 25-30%-ը կարելի է նախատեսել տեսական պարապմունքներին, իսկ 70-75%-ը՝ գործնական աշխատանքներին:

Ժամանակակից հասարակության՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների բարձր մակարդակ ունեցող տեխնիկական մասնագետներ ունենալու սոցիալական պահանջի և տեխնիկական առարկաների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հիմքի վրա ուսուցման տեսական-մեթոդական ոչ բավարար չափով մշակված համալիրի միջև հակասությունը պայմանավորեց հետազոտության հիմնախնդիրը: <<Տեխնոլոգիա>> առարկայի դասաժամերին տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը որակապես կբարելավվի, եթե.

1. Տեսականորեն հիմնավորվեն և գործնականորեն կիրառվեն <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման գործընթացի կազմակերպման գիտամեթոդական սկզբունքները:
2. <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման մեթոդիկական հիմնվի տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների լայն կիրառման վրա, որը կնպաստի սովորողների տեխնիկական, քննադատական, վերացական մտածողության զարգացմանը, առարկայի տեսական հիմունքների յուրացմանը:
3. <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման գործընթացն ապահովվի տեղեկատվական միջոցներով, կիրառվի էլեկտրոնային դասագրքով ուսուցում:

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասաժամերին տեղեկատվական հաղորդակցման տոխնոլոգիաներն առավել արդյունավետ են կիրառվում, քանի որ այն նպաստում է առարկայի լիարժեք յուրացմանը, լայն հնարավորություններ է ընձեռում ծավալուն տեղեկատվության որոնման, փոխանցման, պահպանման համար, խթանում է սովորողների ստեղծագործական, քննադատական, տեխնիկական մտածողության զարգացմանը: Էլեկտրոնային դասագրքերի ստեղծումը, ուսուցման գործընթացում ներդրումն ու օգտագործումը տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման մանկավարժական-մեթոդական դրսևորումներից են՝ համապատասխան անձնակենտրոն ուսուցման հիմնական պահանջներին: Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում է տեխնիկական առարկաների ուսուցման բնագավառում առկա մասնագիտական, մանկավարժական և մեթոդական գրականության և մշակված հայեցակարգի համալիր վերլուծությամբ, հետազոտության գիտատեսական բազայով, առաջադրված խնդիրներին ու նպատակներին համարժեք հետազոտական մեթոդների կիրառմամբ, մանկավարժական գիտափորձի տևական բնույթով, ստացված արդյունքների վերլուծությամբ, ընդհանրացմամբ, ստացված տվյալների, եզրակացությունների, հանձնարարականների հիմնավորմամբ:

Այս յուրահատուկ առարկայի դասավանդման հիմնական նպատակներն են սովորեցնել աշակերտներին աշխատել, լինել աշխատասեր, պատրաստել նրանց ինքնուրույն աշխատանքային կյանքին, բարիք ստեղծել, ծավալել արտադրական գործունեություն:

Որպես արհեստագործ, նորարար, ստեղծագործող՝ աշակերտները կհաջողեն իրենց աշխատանքում, եթե նախապես իմանան իրենց մտածած արտադրանքի ինչ տեսակեր արդեն գոյություն ունեն, ինչ տեխնոլոգիազան գործընթացներ կան այդ իրն արտադրելու համար: Հենց այս կարևոր գործը կատարելու համար էլ աշակերտը դառնում է մեդիա դաշտի սպառողներից և հետագայում էլ՝ նաև մեդիաստեղծող:

«Մեդիա», «Մեդիագրագիտություն»- մասնագիտական ակնարկ

«Մեդիա»-ն տեղեկությունը հասցնելու ամենաարագ և արդյունավետ միջոցն է: Այն բազմաշերտ և բազմաֆունկցիոնալ է: Ժողովրդավարության զարգացմանը զուգահեռ մեծացել է վերջինիս դերը և նշանակությունը հասարակության կյանքում: Ժամանակակից աշխարհում մեդիայի զարգացումը տեղի է ունենում մի քանի ուղղություններով.

տեղեկատվական տեխնոլոգիաների առաջխաղացմամբ ընդլայնվել է մեդիայի տարածման աշխարհագրությունը, վերջինիս լսարանը և դարձրել առավել մատչելի և բազմաբովանդակ: Ընդլայնվել է մեդիա դաշտում գործող լրատվամիջոցների տեսակները: Տպագիր մամուլին, հեռուստատեսության և ռադիոյին զուգահեռ զարգացել է առցանց մեդիան՝ տեղեկատվական դաշտ բերելով անհատ լրագրողների, բլոգերների, քաղաքացի լրագրողների և այլն: Այս զարգացումներն էլ իրենց հերթին ստեղծել են ապատեղեկատվության տարածման և մեդիա մանիպուլյացիայի ռիսկեր: Համացանցի և սոցիալական մեդիայի տարածումը խթանել է տեղեկատվական հոսքի ներթափանցումը հասարակություն՝ ստեղծելով լրացուցիչ անհրաժեշտություն վերջինիս կրթելու և տեղեկությունների ստուգման նոր գործիքներ ստեղծելու:

«Մեդիագրագիտություն»-ը այն հմտությունների ամբողջությունն է, որը մարդկանց թույլ է տալիս ձեռք բերել ,քննադատաբար գնահատել և ստեղծել մեդիա:Մեդիագրագիտությունը սահմանվում է որպես ունակություն՝ ձեռք բերելու,վերլուծելու,գնահատելու,ստեղծելու և գործելու՝ օգտագործելով հաղորդակցման բոլոր ձևերը:Ըստ մարշալ Մաքլյուենի՝ հաղորդակցման միջոցները ինքնին պետք է դիտարկվեն որպես մարդու,մշակույթի և հասարակության ձևավորման միջոց:

Հետազոտության կատարման հիմնավորումը կայանում է նրանում,որ տեխնոլոգիապես զարգացած այս դարաշրջանում սովորեցնենք աշակերտներին մեդիագործիքներից օգտվելու կարողություններ և հմտություններ՝ նպաստելով առարկայի արդյունավետ դասավանդմանը և դասաժամերին տրված արտադրանքի որակի բարձրացմանը:Հետազոտելով ,բացահայտելով և գտնելով մեդիագործիքների դերն ու նշանակությունը,դրա առկայության կարևորությունը տեխնոլոգիա առարկայի ուսուցման,մատուցման ձևերում՝ կարող ենք ճիշտ ուղղորդել սովորողներին՝ օգտագործելով նրանց կարողությունները ամբողջ ծավալով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ



- Սովորեցնել աշակերտներին մեդիագործիքների տեսակները՝ դրանցից մեզ համար հաճախակի օգտագործվողների մասին տալով անհրաժեշտ գիտելիքներ, որպեսզի հեշտությամբ կարողանան կիրառել մեր աշխատանքներում
- Խթանել տեխնոլոգիա առարկայի դասավանդմանը՝ կիրառելով մեդիան մեր աշխատանքներում
- Բարձրացնել դասաժամերին պատրաստվող արտադրանքի որակը՝ նախապես կատարելով մեդիաուսումնասիրություններ համանուն արտադրանքի ոլորտում
- Միավորել տեխնոլոգիական և մեդիագրագիտության ոլորտներից ստացված գիտելիքները և հաջողությամբ համադրել աշխատանքում
- Ուժեղացնել, կատարելագործել արտադրանքի վաճառքի համար կազմակերպված գովազդային արշավը՝ օգտագործելով նաև տարատեսակ մեդիահարթակներ
- Նախանշել հետագա անելիքները միայն նախնական մեդիաուսումնասիրությունից հետո, որպեսզի հեշտ կանխատեսելի լինի աշխատանքի արդյունավետությունը

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



? Ուսումնասիրել մեդիագործիքների բազմազանությունը և դրանցից գտնել մեր աշխատանքին նպատակահարմարները՝ բացահայտելով նշվածների մասին անհրաժեշտ մանրամասն տեղեկությունները

? Մշակել առարկան դասավանդելու համապատասխան մոտեցում մեդիադաշտի, մեդիագրագիտության ինտեգրմամբ, որպեսզի բարձրացնենք դասավանդման արդյունավետությունը

? Կիրառել մեդիադաշտից ընտրված մեզ հետաքրքրող արտադրանքի պատրաստման լավագույն տեխնոլոգիան

? Մշակել արդյունավետ աշխատելու քայլարշավ՝ «մեդիա+տեխնոլոգիա» համախմբմամբ

? Կազմակերպել արտադրանքի պատրաստի խմբաքանակի վաճառք՝ օգտագործելով մեդիադաշտի ընձեռած բազում հնարավորություններից մեզ հասանելիները և մեր սպառողի նախընտրելիները

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



- ★ Խմբային աշխատանքի մեթոդ
- ★ Խմբերում՝ ելևելով աշակերտների ֆիզիկական և մտավոր կարողություններից, աշխատանքի բաժանում
- ★ Բլոգի բացման և դրա գրագետ վարման, տեսանյութերի ներբեռնման և հավանությունների հավաքման մեթոդ
- ★ Առարկային առանձին բաղադրիչի ինտեգրման մեթոդ
- ★ Ուսուցչի հետ համագործակցության մեթոդ
- ★ Մեդիահարթակում արտադրանքի գովազդային արշավի կազմակերպման մեթոդ
- ★ Կրթության առնձնահատուկ պայմաններով սովորող աշակերտներին աշխատանքին ակտիվ ինտեգրման մեթոդ

ՄԵԴԻԱԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Աշխարհում տեխնոլոգիաները բառացիորեն ամենուր են, և երեխաները ավելի շուտ են հարմարվում դրան, քան նախորդ սերունդերը: Ի տարբերություն ուսուցիչների, սովորողները մեծանում են թվային աշխարհում: Բոլոր տարիքի սովորողների համար բացարձակապես բնական է օգտագործել տեխնոլոգիան իրենց կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Ահա թե ինչու դասարանում թվային գործիքները դառնում են ավելի ու ավելի կարևոր: Դասավանդման ավանդական մեթոդներն արդեն իսկ վերափոխվում են՝ հարմարվելով 21-րդ դարի սովորողների կարիքներին:

Տեխնոլոգիաների ինտեգրումը կրթական պրոցեսին սովորողների մոտ բարձրացնում է հետաքրքրասիրությունը, խթանում նրանց ներգրավվածությունը և հանգեցնում է ավելի լավ սովորելու և հասկանալու: Այս գործոնները առաջնային են յուրաքանչյուր ուսուցիչի համար, և այսօր դրանց հնարավոր է հեշտությամբ հասնել՝ դասարանում թվային գործիքներ օգտագործելով: Ահա այսօրիկ նորարարական գործիքներ, որ կարող են օգտագործվել մանկավարժների և սովորողների կողմից:

Ամենատարբեր բնույթի բազմազանություն կա մեդիագործիքների աշխարհում:

Այն ամենն ինչի մեզ համար ինֆորմացիայի աղբյուր է ծառայում համարվում է մեդիագործիք:

Դպրոցահասակներին ամենից հաճախ հասանելի մեդիագործիքներն են համակարգիչը, հեռախոսները, պլանշետները, շատերի համար նաև ռադիոընդունիչը և հեռուստացույցը: Քչերը կարող են պատկերացնել, որ առավոտյան իրենց հարևուհին և երբեմն մեդիագործիք կարող է լինել իրենց համար՝ հայտնելով այս կամ այն ինֆորմացիան: Բոլոր ժամանակների ամենահզոր մեդիագործիքը եղել է և երևի մնում է և կա գիրքը: Չնայած 21-րդ դարի գերզարգացած տեխնոլոգիական իրականությանը՝ միևնույն է հասարակությանը գրավում և ձգում է գիրքը: Սակայն փոխվել են ժամանակները, փոխվել է նաև մարդկության զգալի մասը՝ գերադասելով մեդիահարթակի գործիքների օգտագործումը:

Դպրոցում սովորողների համար մեծ հնարավորությունների անդադար շարան է բացված մեդիայի օգտագործմամբ: Մեդիագործիքների հիմնական, հաճախ օգտագործվող տեսակները մեր աշխատանքում հետևյալներն են.

- սոց.ցանցեր
- բլոգ
- վլոգինգ
- գովազդ
- մասնագիտական գրականություն
- ամսագրեր
- հոդվածներ

Անհրաժեշտ այս գործիքների մասին մի փոքր մանրամասն.

→ ՍՈՑ. ՑԱՆՑԵՐ - այս գործիքներից մեր աշխատանքում սովորաբար օգտվում ենք այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում դասարանական խմբեր կազմելու, ուսուցչի հետ հեռավար ֆորմատով համագործակցելու, միջխմբային հեռավար քննարկումներ կազմակերպելու համար:

→ ԲԼՈԴ- Այս մեդիագործիքն օգտագործում ենք երբ անհրաժեշտ է լինում կատարված աշխատանքը լուսաբանել՝ կրտսեր սերունդին կիրառված փորձը փոխանցելու, աշխատանքային մատյան վարելու, ուսուցչին կատարած աշխատանքի համար հաշվետու լինելու համար:

→ ՎԼՈԳԻՆԳ- Սա ամենատարածված և հաջողված մեդիագործիքներից է, որը աշակերտները, երբեմն նաև ուսուցիչը կարող է կիրառել իր աշխատանքում՝ նախագծային աշխատանքների փուլային աշխատանքը լուսաբանելու, աշխատանքի հաջորդականության տեսամատյան վարելու, կատարած ողջ աշխատանքը տեսանյութերի և նկարների համադրությամբ

ներկայացնելու մեդիասպառողներին,ինչը չեն կարող անել բլոգինգի ժամանակ:

- Գովազդը մեր օրերում գրեթե բոլոր ոլորտների ամենաօգտագործվող մեդիագործիքներից է թե՛ մեդիաստեղծողների և թե՛ մեդիասպառողների համար:Մեր աշխատանքում ևս աննկարագրելի մեծ դեր,նշանակություն և կարևորություն ունի գովազդ ստեղծելը,եղածներից օգտվելը և գրա շնորհիվ մեր արտադրանքի շահավետ սպառելը:

- Մասնագիտական գրականություն- Ինչպես արդեն նշեցի տեխնոլոգիապես զերզարգացած մեր դարաշրջանը դեռ լիովին չի անկախացել գրքից և մեզ դարերով ժառանգություն հասած գրականությունից:Կոնկրետ մեր մասնագիտական գրականության էլեկտրոնային պաշարը սահմանափակվում է, ցավոք սրտի, միայն էլեկտրոնային դասագրքերով,բայց տեսական գիտելիքները այս կամ այն թեմայի շրջանակում խորացնելու համար հաճախ ենք օգտագործում մասնագիտական գրականության գրքային տարբերակներ:

- Ամսագրեր-Մեդիագործիքի այս տեսակը գրեթե հավասարապես զարգացած է և՛ էլեկտրոնային տարբերակով,և՛ թղթային:Մինչև օրս աշխարհի առաջատար կազմակերպությունները հրապարակում են իրենց ամսագրերը ` գովազդելով իրենց արտադրանքը կամ ծառայությունը, տեղեկացնելով իրենց աշխատանքի հետ կապված մանրամասներ:

- Հոդվածներ- Նորարարական հոդվածների հեղինակների լավագույն մեդիագործիքներից է այս տեսակը :Մինչ օրս հոդվածները ևս թողարկվում են և՛ թերթերում,և՛ համացանցում:

Մեդիայի օգտագործման հաջորդականությունը մեր աշխատանքում

Տեխնոլոգիա առարկայում մեդիադաշտի օգտագործումը աշխատանքի ամբողջ ընթացքում է՝ նախագծման փուլից սկսած մինչև պատրաստի արտադրանք և դրա վաճառքը: Բայց կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի՝

- մինչև աշխատանքը սկսելը
- արտադրելու գործընթացում
- արտադրանքի սպառման փուլ

ՄԻՆՉԵՎ ԱՃԽԱՍՏԱՆՔԸ ՍԿՍԵԼԸ

Թերևս կարևոր փուլերից եմ համարում մինչև աշխատանքը սկսելը մեդիայի ինտեգրման փուլը: Այս փուլում ցանկալի է նախ ուսուցիչը, ապա՝ աշակերտները՝ ուսուցչի ուղղորդումամբ կատարեն մեդիաուսումնասիրություն: Երբ նախապես ուսուցչի և աշակերտների միսնական քննարկմամբ որոշվում է, թե գործնական պարապմունքին ինչ իր կամ արտադրանք են պատրաստելու կամ արտադրելու, ուսուցիչը նախ ինքն է սկսում մեդիադաշտի համանուն արտադրանքի ուսումնասիրություն, ապա հանձնարարում է աշակերտներին:

Ուսուցչի սկզբնական ուսումնասիրությունն ինքնանպատակ չէ. դա նրա համար է, որ ուսուցիչը՝ որպես փորձառու մասնագետ, կարող է ավելի արագ գտնել մեդիադաշտում առկա հավաստի աղբյուրները, ապա ուղղորդման կարգով հանձնարարի աշակերտներին՝ կոնկրետ որ մեդիագործիքից, որ հղումներից օգտվելն է նպատակահարմար: Բայց մի քանի փորձից հետո, ուսուցիչը պետք է արդեն կատարած մեդիաուսումնասիրության հիման վրա կարողանա թույլ տալ, հանձնարարել աշակերտներին, որ ինքնուրույն կատարեն սկզբնական մեդիաուսումնասիրությունը, որպեսզի հմտանան և կարողանան հավաստի

աղբյուրների ստուգում կատարեն ինքնուրու՝ չհավատալով մեղիադաշտում հայտնված ամեն տեսակ ինֆորմացիայի:

Սկզբնակա մեղիաուսումնասիրությունը տեխնոլոգներիս տալիս մի քանի հնարավորություն՝ ելնելով մեր նպատակներից.

1. արդյունավետ օգտագործել մեր ժամանակը և միջոցները՝ վերցնելով մեզ անհրաժեշտ արտադրանքի պատրաստման համար մեղիադաշտում առկա նկարներից,սխեմաներից,տեսանյութերից որևէ մեկը:Ճնայելով ժամանակ մենք կարող ենք մեծացնել մեր արտադրանքի քանակը,իսկ արդեն եղած մոդելն օգտագործելով կարող ենք խուսափուլ արտադրության ժամանակ հանկարծակի ծագած խնդիրներից և կանխագուշակել աշխատանքի հաջող և կազմակերպված ընթացքն ու ավարտ
2. եթե մեր նպատակն է արտադրել օրինակ՝ նմանը չունեցող գրչաման,ապա մեղիաուսումնասիրությունները օգնում են տեսնել,տեղեկանալ եղած օրինակների մասին և հետո նոր ստեղծել նոր մոդել:Ուզում եմ անպայման մանրամասնել,որ ցածր դասարաններում՝ 1-5,դպրոցական ուսումնական արտադրական գործընթացում մենք նորն ենք համարում անգամ արդեն գոյություն ունեցող արտադրանքի որևէ մոդելի գույնի,ձևի,չափի,պատրաստման նյութի փոփոխմամբ ստացված արտադրանքը
3. եթե որևէ նորարար գաղափար է մեզ մոտ հղացել,ապա նախնական մեղիաուսումնասիրությամբ կարող ենք իմանալ՝ որոյոք գոյություն ունի մեր մտահղացումն արդեն աշխարհի որևէ կետում,թե մենք առաջինն ենք դա մտածել և կանող ենքն պետք է պահպանել արտադրանքի,մտքի,գաղափարի հեղինակային իրավունքը:Չէ՞ որ այսօր տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ մեծանում են այնպիսի կարևորագույն խնդիրներ,ինչպիսիք են գրագողությունը և հեղինակային իրավունքների խախտումը:Չենց այս նպատակով էլ աշակերտներին անհրաժեշտ է զինել մեղիադաշտում էթիկայի պահպանման,այս ոլորտին առնչվող օրենսդրության հենքային կետերին,որպեսզի նրանք չանտեսեն դրանք՝ ինչպես մեղիասպառող ,այնպես էլ մեղիաստեղծող :

ԱՐՏԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արտադրելու գործընթացում մեղիադաշտից օգտվելը ևս կարևոր է: Լինում են, երբ նախապես ընտրված արտադրանքը տեխնոլոգիական բարդ փուլերից է բաղկացած և աշակերտները չեն հիշում դրանց հաջորդականությունը: Նման դեպքերում, օգտվելով հեռախոսներից կամ դասասենյակում առկա համակարգչից, կարող են նայել և հերթականությամբ կատարել աշխատանքը: Այս փուլում մեղիագործիքների օգտագործումը մեր առարկայի դեպքում մեծապես նպաստում է ԿԱՊԿՈՒ սովորողներին տեսանյութերի, նկարների միջոցով կարողանանք բացատրել, ավելի պատկերավոր բացատրել աշխատանքի կատարման սկզբունքը և ակնկալել աշխատանքի բարձր արդյունավետություն ևս այս սովորողների մոտ:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՊԱՌՄԱՆ ՓՈՒԼ

Երբ մեր աշակերտները զբաղվում են արտադրությամբ՝ ձևավորել այս կամ այն ձեռնարկատիրական գործունեության տեսակը, նպատակահարմար, ոգևորող և նորից աշխատանքի մղող գործընթաց է արտադրանքի վաճառք կազմակերպելը: Աշխատանքի այս փուլում աշակերտները իրենց՝ գովազդի ոլորտում ունենցած գիտելիքները ներդնում են իրենց արտադրանքը գովազդելու համար հնարավորինս մեծ լսարանին: Կարող են և՛ համացանցից օգտվելով հրավիրատոմների պատրաստել վաճառքի մասնակիցների համար, և՛ արտադրանքը գեղեցիկ ներկայացնելու համար պաստառներ պատրաստել, և համացանցում, սոցիալական ցանցերում համապատասխան հայտարարություններ տեղադրել: Այս փուլի գրագետ, արդյունավետ աշխատանքը մեծապես նպաստելու աշակերտների արտադրանքից նարավորինս մեծ շահույթ ստանալուն:

Ինչպես արդեն երևում է **ՄԵԴԻԱՆ ԱՄԵՆՈՒՐ Է ԵՎ ՄՇՏԱԿԱՆ:**

Առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացում մեդիայի ինտեգրամբ

Տեխնոլոգիաները մատչելի դարձնելուց հետո, հաջորդ քայլը դրանց ներդրումն է: Տեխնոլոգիաների ներդրման նպատակներն ու խնդիրներն անընդհատ փոխվում են, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ունի նոր հետաքրքրություններ և ներպահանջներ: Մյուս կողմից՝ տեխնոլոգիաների ներդրումը կախված է ուսուցիչների և աշակերտների կողմից տեխնոլոգիաների օգտագործման որակից: Եթե տեխնոլոգիաների օգտագործումը՝ վատ պատրաստվածության պատճառով ավելի է դանդաղեցնում ուսումնառության գործընթացը, քան ուսումնական գործընթացի կազմակերպման դասական տարբերակում, ինտեգրման արդյունքում ուսուցիչների և աշակերտների համար դառնում է կասկածելի և անիմաստ: Կրթության արդյունավետությունը միշտ էլ կախված է եղել ուսուցիչների պատրաստվածության մակարդակից: Այսօր ուսուցիչն առաջվա նման ուսուցման–ուսումնառության գործընթացի գլխավոր գործող անձն է, սակայն տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների և կրթության ինտեգրացումն է ուսուցչի նոր դերի ձևավորումը: Բարձր տեխնոլոգիական միջավայրում ուսուցիչը դառնում է ոչ միայն տեղեկատվության և ակադեմիական փաստերի աղբյուր, այլ նաև աշակերտներին աջակցում է հասկանալու ուսման բուն գործընթացը: Նա օգնում է, որ աշակերտները կարողանան գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը, պարզել, թե արդյոք այն համապատասխանում է տրված պահանջներին, թե ինչպես կարելի է օգտագործել այդ նյութը՝ տրված հարցերին պատասխանելու և բարդ խնդիրներ լուծելու համար: Վաղուց ի վեր հայտնի է, որ յուրաքանչյուր աշակերտ տարբեր կերպ է յուրացնում նոր գիտելիքները: Նախկինում ուսուցիչների համար դժվար էր անհատական մոտեցում գտնել յուրաքանչյուր աշակերտի համար: Իսկ այժմ, համակարգչային ցանցերի և էլեկտրոնային միջոցների կիրառմանը զուգընթաց, դպրոցները հնարավորություն են ստացել նոր տեղեկատվությունն այնպես մատուցել, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները: Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման խոչընդոտ կարող է դառնալ նաև կիրառվող ծրագրի և

օգտագործվող համակարգիչների անհամապատասխանությունը, որի հետևանքով դրանք աշխատում են դանդաղ և ընդհատումներով: Դժվարություններ են հարուցում նաև ռեսուրսների ստեղծման անկարողությունը:

Ներդրումը պահանջում է տեխնոլոգիաների կիրառման և գիտելիքների գնահատման հստակ մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռի, որպեսզի ուսուցիչներն ու աշակերտները կարողանան բացահայտել ու գրանցել տեխնոլոգիաների ունեցած դերն իրենց ունեցած հաջողություններում: Դրանք կարող են լինել, տվյալ առարկայից աշակերտների գիտելիքների որակը սահմանող գնահատման սանդղակի բաղադրիչ հանդիսացող տեխնոլոգիաների կիրառման մակարդակների բնութագիրը: Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ինտեգրումն աստիճանաբար իրականացվում է նաև դպրոցավարության համակարգում, ինչը վճռորոշ ազդեցություն կունենա նաև ուսուցիչների կողմից դասապրոցեսում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ կիրառելու վրա: Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ստեղծվող միասնական <<օնլայն>> միջավայրը նպաստում է, որ դպրոցները դիտարկվեն որպես մի վայր, որտեղ ուսուցիչներն ու աշակերտները հանդիպում են, քննարկում իրենց նախագծերը, ձևավորում ուսուցման–ուսումնառության նպատակները, դիմում միմյանց օգնությանը: Համակարգչային ցանցերի և ծրագրային ապահովման օգնությամբ դպրոցները կարող են իրականացնել վարչական կառավարում (կիրառել իրենց ռեսուրսները՝ ֆինանսներ, գույք, դասացուցակ, կադրեր) և տեղեկություն ստանալ նշված խնդիրների կատարման մասին: Այսօր, ուսումնական նոր առարկաների ներմուծումն ուսումնական պլան իրականացվում է ինտեգրման սկզբունքով: Մյուս կողմից՝ ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքերից մեկն են հանդիսանում միջառարկայական կապերը: Անհմացիաների մուտքն ուղեկցվում է նման նոր կապերի ստեղծմամբ, ամրապնդմամբ և որակական նոր մակարդակի ապահովմամբ: Նախագծի մեթոդը, վեբ–որոնումը, ուսուցման կարճատև դասընթացներն իրենց հիմքում ինտեգրված ուսումնասիրության ծրագրեր են: Այստեղ, ոչ միայն տվյալ առարկայի դասավանդման ժամանակ անհմացիաների ինտեգրում է ենթադրվում, այլ նաև տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ այլ առարկաների ավելի արդյունավետ ինտեգրում: Վերջին տարիներին ուսուցչի մասնագիտական գործունեությունը կրել է զգալի փոփոխություններ: Ժամանակակից կրթության շատ խնդիրներ ուղղակի կապված է տողեկատվական տեխնոլոգիաների հետ: Սակայն, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցներում դեռ չի նշանակում, որ ուսուցիչների հմտությունն ինքնաբերաբար

կբարձրանա: Ուսուցիչների ներգրավումը տեղեկատվական գործընթաց կատարվում է ոչ այդքան արագ: Ուսուցիչների և աշակերտների տեխնոլոգիական, ազգային կրթական չափորոշիչները, որոնք մշակված են <<Տեխնոլոգիաներ կրթության համար>> միջազգային ընկերության կողմից, հիմնարար փաստաթուղթ և ուղեցույց են կրթության ոլորտում տեխնոլոգիաների ներդրման գործում: Այդ չափորոշիչները մշակված են թե ուսուցիչների և թե աշակերտների համար և համակարգված են վեց առանձին խմբերում: Դրանք ընդգրկում են տեխնոլոգիաների հետ աշխատանքի մի շարք հստակ ցուցումներ:

1. ՏՐՏ գործողություններ և հասկացություններ. - Ուսուցիչները դրսևորում են տեխնոլոգիական գործողությունների և հասկացությունների համապատասխան ըմբռնում, - ուսուցիչները ցուցաբերում են ՏՐՏ-ների հետ առնչվող գործողությունների և հասկացությունների մասին համապատասխան նախնական գիտելիքներ և կարողություններ, - շարունակաբար զարգացում են իրենց տեխնոլոգիական կարողությունները՝ գոյություն ունեցող և նոր ի հայտ եկող տեխնոլոգիական նվաճումներից, նորություններից հետ չմնալու համար:

2. Ուսումնառության միջավայրի և փորձառության պլանավորում և ստեղծում. - ուսուցիչները պլանավորում և ստեղծում են ՏՐՏ-ների հիման վրա ուսուցման և ուսումնառության արդյունավետ միջավայր և փորձառություն, - ուսուցիչները ստեղծում են երեխաների զարգացմանը համապատասխան ուսումնառության հնարավորություններ, կիրառում տեխնոլոգիաների վրա հիմնված դասավանդման մեթոդներ՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները, ՏՐՏ-ները կիրառում են ուսուցմանը և ուսումնառությանն առնչվող ընթացիկ հետազոտություններ կատարելու համար. - կարողանում են գտնել տեխնոլոգիական ռեսուրսները և գնահատել դրանք՝ ճշգրտության, համապատասխանության և պիտանելիության տեսանկյունից, - պլանավորում են ուսումնական գործունեության համատեքստում տեխնոլոգիաների կիրառման ու հնարավորությունների հմակարգումը, - պլանավորում են տեխնոլոգիաների կիրառման միջավայրում սովորողների ուսումնառությունը կառավարելու մեթոդներն ու ռազմավարությունը:

3. Ուսուցում, ուսումնառություն և ուսումնական ծրագիր (կրթակարգ). - Ուսուցիչներն իրագործում են ուսումնական ծրագիրը (կրթակարգ), կիրառում են աշակերտների ուսումնառությանը խթանող տեխնոլոգիաների ներդրմանը նպաստող մեթոդներն ու ռազմավարությունները, - ուսուցիչներն աջակցում են ՏՐՏ-ների վրա հիմնված ուսումնական փորձառությունը, որի նպատակն առարկայի բովանդակությանը և

աշակերտների տեխնոլոգիական հմտություններին ներկայացվող չափորոշիչներին հասնելն է, - ՏՅՏ-ներն օգտագործում են՝ աշակերտակենտրոն դասավանդմանն աջակցելու, աշակերտների տարբեր կարիքները բավարարող մեթոդների և ռազմավարությունների համար, - ՏՅՏ-ներն օգտագործում են աշակերտների ճանաչողական և ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար, - կիրառում են ՏՅՏ-ների միջավայրում սովորողների ուսումնառությունը կառավարելու մեթոդներ ու ռազմավարություններ:

4. Չնահատում և արժևորում. - Ուսուցիչները տեխնոլոգիաներ կիրառում են գնահատման և արժևորման մեթոդների ու ռազմավարությունների բազմազանությանը նպաստելու համար, - ուսուցիչները ՏՅՏ-ները կիրառում են աշակերտների առարկայական գիտելիքները գնահատելու համար՝ գնահատման տարբեր հնարքների միջոցով, - ՏՅՏ ռեսուրսներն օգտագործում են տվյալներ հավաքելու, վերլուծելու, արդյունքները մեկնաբանելու և դրանց մասին հաղորդելու համար՝ դասավանդման փորձառությունը բարելավելու և աշակերտների ուսման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, - կիրառում են գնահատման բազմազան մեթոդներ՝ սովորողների կողմից ՏՅ տեխնոլոգիաների օգտագործման համապատասխանությունը պարզելու, ուսումնառության, հաղորդակցման և արդյունավետության բարձրացման նպատակով:

5. Արդյունավետություն և մասնագիտական փորձառություն. - Ուսուցիչները ՏՅՏ-ներ կիրառում են իրենց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և մասնագիտական փորձառությունը կատարելագործելու համար, ուսուցիչները ՏՅՏ ռեսուրսներն օգտագործում են շարունակական մասնագիտական զարգացման և ամբողջ կյանքում սովորելու նպատակով, - մշտապես գնահատում և վերլուծում են իրենց մասնագիտական գործունեությունը՝ աշակերտների ուսումնառությունը բարելավելու, ՏՅՏ-ների կիրառման մասին գիտակցված և տեղեկացվածության հիման վրա որոշումներ կայացնելու նպատակով, - ՏՅՏ-ները կիրառում են աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, - ՏՅՏ-ներն օգտագործվում են աշակերտների ուսումնառությունը բավարարելու, գործընկերների, ծնողների, համայնքի հետ հաղորդակցվելու և համագործակցելու համար:

6. Սոցիալական, բարոյական, իրավաբանական և մարդկային (հոգեբանական) խնդիրներ. - Ուսուցիչներն ըմբռնում են դպրոցներում տեխնոլոգիաների ներդրման հասարակական, բարոյական, իրավաբանական, մարդկային զարգացման խնդիրները և դա հաշվի են առնում իրենց աշխատանքում,

- ուսուցիչները մոդելավորում և ուսուցանում են տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված իրավաբանական և բարոյական խնդիրները,
- տեխնոլոգիաներն օգտագործում են տարբեր ծագում, խառնվածք և կարողություններ ունեցող աշակերտներին աջակցելու համար,
- նպաստում են տեխնոլոգիական միջոցների անվտանգ օգտագործմանը,
- նպաստում են, որ տեխնոլոգիական ռեսուրսները հավասարապես մատչելի լինեն բոլոր աշակերտների համար:

Պետք է գտնել մի շարք հարցերի պատասխաններ. - Ինչու է այդպես դժվար և դանդաղ կատարվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում, - ինչով է բացատրվում ուսուցիչների՝ իրենց մասնագիտական գործունեության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու ցանկությունը կամ ցանկության բացակայությունը, - ինչ ձևերով և ցանկություններով են նրանք առաջնորդվում, - ինչպիսի խնդիրներ պետք է լուծել մանկավարժական կադրերի պատրաստվածության արդյունավետությունը բարձրացնելու համար: Վերջին տարիների ընթացքում համակարգչի հնարավորությունները շատ են աճել, իսկ ուսուցիչների պատրաստվածությունը՝ ոչ այնքան: Ինչու: Չետևություն՝ ամեն ինչ կախված է ուսուցչի անձից, այլ ոչ թե տեխնիկայի քանակից: Դպրոցներում պետք է ստեղծել պայմաններ, որպեսզի ուսուցիչները ցանկանան և կարողանան օգտագործել կամ ստանալ համակարգչային գիտելիքներ: Կարճաժամկետ դասընթացների կենտրոններն ապահովվում են ուսուցիչներին հաղորդակից լինելու նոր մանակավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներին: Բացի դրանից, ուսուցիչների աշխատանքից կտրված ուսուցումն ստեղծում է շատ հավելյալ դժվարություններ: Դասընթացից հետո ուսուցիչը վերադառնում է իր սովորական միջավայր և ստացած գիտելիքները հաճախ մոռում են ոչ պահանջված: Այդ պատճառով, դպրոցներում պետք է լինի համակարգ, որը թույլ կտա մշտապես ավելացնելու գիտելիքները և ուսուցումից անցնել կրթության ու ինքնակրթության, որն էլ ուսուցիչների մեջ կառաջացնի տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործելու ձգտում: Տվյալ համակարգը պետք է ուղղված լինի ուսուցչի մտավոր և ստեղծագործական ունակությունները զարգացնելու և տեղեկատվական տեխնոլոգիաները մանկավարժական գործունեության մեջ օգտագործելուն:

Չարցումները ցույց են տվել, որ ուսուցիչների 51%-ը գտնում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը պետք է ոչ միշտ և ոչ ամեն տեղ, իսկ 49%-ը համոզված է, որ

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է անբաժան լինեն դպրոցի զարգացման ծրագրից: Դպրոցի զարգացող տեղեկատվական կրթական միջավայրի պայմաններում բարձրանում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և որակը: Տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա դպրոցում տեղեկատվական կրթական միջավայրի ստեղծումը հանդիսանում է կարևոր հանգամանք՝ ստեղծելու օպտիմալ պայմաններ ուսուցիչների զարգացման և ինքնազարգացման, ինչպես նաև ուսումնամեթոդական գործունեության կատարելագործմանն աջակցելու համար: Ուսուցչի տեղեկատվական-հաղորդակցական իրազեկությունը, այսինքն՝ տեղեկատվության հետ աշխատելու և այն մյուսներին փոխանցելու ընդհանուր կարողությունների համակարգը, ժամանակակից կրթության և ուսուցիչների մասնագիտական զարգացման գերակայություններից մեկն է:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Արդյունքում սովորողները հնարավորություն կունենան տարբեր մեդիագործիքների օգնությամբ կատարել գործնական-նախագծային աշխատանքներ, ներբեռնել հետաքրքիր և բովանդակային դասանյութեր,իրենց աշխատանքին ,գործնական պարապմունքների ժամանակ արտադրանքին վերաբերող տեսանյութեր,նկարներ,սխեմաներ համապատասխան կայքերից:

Մեդիադաշտի և մեդիագործիքների օգնությամբ աշակերտները կարող են ավելի որակյալ և բազմանուն արտադրանք տալ:

Աշխատանքի կատարմանը զուգընթաց աշակերտները կդառնան գրագետ մեդիաուլորտում՝ ինչպես գրագետ մեդիաստեղծող,այնպես էլ գրագետ մեդիասպառող:

Ջետազոտության արդյունքում տեխնոլոգիա առարկայի դասավանդումը դառնում է հաճելի և հետաքրքիր նոր ոլորտի ինտեգրմամբ:

Առարկայի դասավանդման այս տեսակի կիրառումը լուծում է մեծագույն խնդիր այն դպրոցներում,որտեղ բացակայում են առարկայական ուսումնական արհեստանոցներ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐԴԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԱՄԸՆԹԱՑ ՔԱՅԼՈՂՆ Է,ՈՒՄՏԻ ՍՈՎՈՐԵՑՆԵՆՔ ՄԱՐԴՈՒՆ՝ ԴԵՌ ԴՊՐՈՑԻՑ ԼԻՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Չետագոտության կատարման ժամանակ հնարավորինս բացահայտեցինք մեդիայի առկայությունը,անհրաժեշտությունը,կարևորությունն ու օգուտը մեր աշխատանքի կատարման համար:Մենք բացահայտեցին աշխատանքի տարբեր փուլերում ինչպիսի մեդիագործիքներից օգտվենք,ինչպիսիսներն օգտագործենք,մեդիյի օգտագործման էթիկայի կանոններն ինչպես պահպանենք:

Չետագոտությունն ապացուցեց,փաստեց՝ մեդիայի անհրաժեշտությունը մեր դասավանդման մեջ:

Առաջարկում եմ տեխնոլոգիայի ուսուցիչներին, օգտվելով մեր կատարած հետազոտությունից և պահպանելով մեր հեղինակային իրավունքը,կիրառել մեր հետազոտությունն իրենց կատարած աշխատանքներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ



- ❖ Սահրադյան Մ.Ղ., Տեղեկատվական նոր տեխնոլոգիաները տարբերակված ուսուցման գործընթացում, <<Մանկավարժական կրթություն, Հայացք դեպի ապագա>> միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մանկավարժ 2007:
- ❖ Մինասյան Մ., Մինասյան Ա., Հարությունյան Ա., Համացանցի օգտագործման ուղեցույց Երևան 2009:
- ❖ media .am կայք

